

## Վորժադուլ Արցախի Մէջ Ցուցեր Երեւանի Մէջ

Ապրիլ 12 եւ 13ին Ստեփանակերտի մէջ ընդհանուր գործադուլ յայտարարուած էր: Նախապէս, նման փորձ մը կատարուած էր Զորեւշաքթի Մայիս 3ին: Անգլիական ՊիՊիՍին, որ լուրը կը հաղորդէր չէր տար գործադուլին դրդապատճառները: Սակայն հաւաստի աղբիւրներէ կ'իմանանք, որ արցախցիները դժգոհ են Յատուկ Կառավարման Յանձնախումբին եւ անոր նախագահ՝ Արքատի Վոլսֆիի կողմնակալ աշխատածելն եւ կ'ուզեն միանալ Հայաստանի: Անոնք կը պա-

(Շար.ը տեսնել 13րդ էջ)

## ԱՐՅԱԽ ✓

(Շար. առաջին էջէն)

հանջեն նաեւ «Կոունկ» Կոմիտէի բանտարկուած անդամ Մանուշարովի ազատ արձակումը:

Կիրակի, Մայիս 7ին շուրջ 150,000 երեսանցիներ ցոյց կատարած են պահանջելով Ղարաբաղի Կոմիտէի բանտարկուած անդամներուն ազատ արձակումը ինչպէս նաեւ՝ Արցախի վերամիացումը: Բանակը, հակառակ իր ազդարարութեան, չէ միջամտած:

Միւս կողմէ, ոչ միայն շատ մը հարցեր դեռ անլոյծ կը մնան Արցախի մէջ, այլ նաեւ կարգ մը երեսոյթներ ցոյց կուտան թէ Ա. Վոլսֆի փոխանակ ամբողջովին անկախ գործելու եւ շրջանը անկախ տնտեսութեան վերածելու, հաշուետու կը դառնայ նաեւ Պաֆուի: Ան նոյնիսկ չէ գրանցած Արցախ ապաստանած հայերը, առարկելով թէ Մարզը ի վիճակի չէ անոնց բնակարաններ հայթայթելու կամ շինելու: